ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ընթերցանության ուսուցումը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ՝ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ՝ Աննա Պողոսյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ծղուկի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն 3

Հետազոտության նպատակը 3

Ի՞նչ է ընթերցանությունը 5

Ընթերցանության նշանակությունը կրտսեր դպրոցում 6

Ընթերցանությունը տարրական դպրոցում 12

Իմ փորձից 14

Վերլուծություն 15

Եզրակացություն 17

Օգտագործված գրականության ցանկ՝18

Դասի պլան 19

Ներածություն

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Հանրակրթության բարեփոխման գործընթացում այսօր կարևորագույն հիմնախնդիր է դարձել սովորողների ընթերցանության որակի և ընթերցողական հմտությունների ցածր մակարդակը, որի պատճառով խնդիրներ են առաջանում հանրակրթական բոլոր առարկաների դասավանդման և ուսումնառության ընթացքում: Ընթերցանության հմտություններն անմիջականորեն ազդում են սովորողների ուսումնառության արդյունավետության և մոտիվացիայի վրա: Այս առումով առաջնային անհրաժեշտություն է դառնում հանրակրթության բոլոր աստիճաններում սովորողների ընթերցանությունը խրախուսելը:

<u>Հետազոտության արդիականությունը</u>

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ընթերցանության կարևորությամբ, քանզի, ըստ հետազոտությունների արդյունքների, տարրական դպրոցն ավարտած աշակերտների մի մասը դժվարանում է կարդալ: Մայրենիի տարրական դասընթացի հիմնական նպատակներից է նաև սովորողի խոսքի զարգացումը, առաջինից չորրորդ դասարանների մայրենիի ծրագրերում ներկայացված սովորողների կապակցված խոսքի զարգացմանը միտված աշխատանքները միանգամայն իրագործելի են: Թեմայի շուրջ մշակել և ներկայացրել եմ աշակերտների ընթերցողական կարողությունների և բանավոր խոսքում ունեցած դժվարությունների հաղթահարմանը միտված մեթոդական հնարներ:

Ընթերցանությունը ոչ միայն մտագործունեության էական բաղադրիչ է, այլև կրթության բովանդակային մաս, հետևաբար այն պիտի կազմակերպվի չափորոշչային պահանջներին համապատասխան և ունենա չափելի վերջնարդյունքներ:

<u>Հետազոտության նպատակը</u>

Ձևավորել սեր դեպի ընթերցանությունը:

1. Բարելավել սովորողների ընթերցանության որակը:

2. Ձևավորել և զարգացնել ընթերցողական և լեզվական գրագիտության կարողունակությունները:
3. Դաստիարակել համամարդկային ու ազգային արժեքներ ազգային և համաշխարհային գրականության ստեղծագործությունների ընթերցանության միջոցով:
4. Մշակել, փորձարկել և ներկայացնել կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացում սովորողների դժվարությունների հաղթահարմանը միտված քայլերը:

<u>Այս նպատակներին հասնելու համար իմ առջև դրել եմ հետևյալ խնդիրները՝</u>

Ուսումնասիրել հետազոտության թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականություն, դիտարկել հիմնական սկզբունքները:

- Ծանոթանալ կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման դժվարությունների հաղթահարման վերաբերյալ ուսուցիչների կարծիքներին:
- Մշակել ընթերցանության միջոցով սովորողների կապակցված խոսքի դժվարությունների հաղթահարման եղանակներ:
- Փնտրել, գտնել սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխան ստեղծագործություններ:
- Հնարավորություն տալ սովորողին ճանաչելու հնարավորինս շատ հեղինակների:
- Այցելել գրադարաններ, գրախանութներ, թանգարաններ, հրատարակչություններ՝ գրքերի ստեղծման, պահպանման աշխատանքներին մասնակցելու, գրքի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու նպատակով:
- Ձևավորել վերլուծական միտք սովորողների մոտ:

- Հյուրընկալել ընթերցասեր, ստեղծագործող ընկերներին, միասին ընտրել ընթերցացանկ տարբեր տարիքի սովորողների համար:

Ի՞նչ է ընթերցանությունը

«Ընթերցանությունը մտքի համար նույնն է,

ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի»

Անգլիացի պոետ Ադիսոն

Իսկ ահա հանճարեղ Չարենցը գրքերի աշխարհը անեզր տիեզերքի է նմանեցնում՝ ձոնելով գրքերին հատուկ տաղ:

Մարդկության պատմության մեջ չկա մի հանճար, որ բացառի ընթերցանության ու գրքի կարևորությունը: Անգամ գիտնականներն են ապացուցել, թե ինչ կարևորություն ունի ընթերցանությունը մարդու համար: Այն ոչ միայն օգնում է, որ մարդը դառնա խելացի, այլ կարող է, ըստ էության, բարելավել նրա ուղեղի աշխատանքը: Ինչպես օրինակ՝ վազքը բարելավում է սրտանոթային համակարգի աշխատանքը, պարբերական ընթերցանությունը բարելավում է հիշողությունը՝ մարզելով ուղեղը: Տարիքի հետ հիշողությունն ու ուղեղի աշխատանքը վատանում են ու դանդաղում, սակայն ընթերցանությունը օգնում է դանդաղեցնել այդ գործընթացը՝ ավելի սթափ պահելով միտքը: Ուղեղի հաճախակի վարժանքները կարող են իջեցնել ուղեղի ծերացումը շուրջ երեսուներկու տոկոսով:

Չնայած նրան, որ ավելի ու ավելի շատ մարդիկ ձեռք են բերում էլեկտրոնային գրքեր՝ արժե հուսալ, որ տպագիր գրքերը չեն պատրաստվում վերանալ: Մարդիկ, ովքեր կարդում են էլեկտրոնային գրքեր, այնուամենայնիվ, դեռ շարունակում են կարդալ նաև տպագիր: Եվ չնայած մենք՝ բոլորս, կողմնակից ենք թվային հարմարավետությանը, սակայն չենք կարող մեզ զրկել տպագիր գրքեր կարդալու հաճույքից:

Ընթերցանությունը քնելուց առաջ կարող է օգնել ավելի լավ քնել, ուղեղին ազդանշան է տրվում, որ ժամանակն է գնալ քնելու: Գրքի ընթերցանությունը ավելի շատ է

հանգստացնում, քան քնից առաջ էկրանին նայելը: Պլանշետների , հեռախոսների էկրանները մարդուն պահում են արթուն ավելի երկար և նույնիսկ՝ վնասում քունը: Դա վերաբերում է նաև երեխաներին:

Որքան շատ է կարդում մարդը, այդքան ավելի շատ բաներ է իմանում: Լավ գիրքը բացում է մի ամբողջ գիտելիքների աշխարհ՝ սկսած երիտասարդ տարիքից: /1/

Գեղարվեստական գրականությունը օգնում է իր ընթերցողներին հասկանալ, թե ինչ են մտածում մյուսները: Ծնողները ցանկանում են, որ իրենց երեխաները ավելի շատ կարդան հաճույքի համար և նրանք, ովքեր ցանկանում են խրախուսել իրենց երեխաներին դառնալու գրքասեր, կարող են սկսել տանը բարձրաձայն կարդալուց: Բարձրաձայն կարդալը երեխաներին փոքր տարիքից կարող է ոգեշնչել: Սա լավ ձև է այն հոբբի դարձնելու համար: Մանկական գրքերը երեխաների բառապաշարը ավելացնում են ավելի քան հիսուն տոկոսով, ի տարբերություն՝ հեռուստատեսության:

Վաղ տարիքից շատ ընթերցելը հիմք է հանդիսանում հետագայում ավելի բարձր մտավոր ունակություններ ունենալու: Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում կարևոր բաժին է հատկացվում ընթերցանությանը: Դրա նպատակն է զարգացնել կարդալու, պատմելու, վերարտադրելու կարողությունները, հարստացնել խոսքն ու բառապաշարը, ճանաչողական գիտելիքները: Շատ ընթերցելը կարող է ավելի դյուրին դարձնել երեխայի շփումը շրջապատի հետ:

Ընթերցանության նշանակությունը կրտսեր դպրոցում

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակները երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է, ընթերցանության նկատմանբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողությունների ձևավորումը: Անշուշտ, եթե ձևավորված է կարդալու կարողությունը, ապա ընթերցած բնագրի շուրջ տարվող մեթոդական ճիշտ

աշխատանքի շնորհիվ ընթերցանությունը դառնում է նաև անձի զարգացման միջոց:

Այդ իսկ պատճառով ուսուցման սկզբնական փուլում ուշադրություն է դարձվում կարդալու, մասնավորապես՝ հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը: Բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտները ընթերցած նյութի բովանդակության մասին ընդհանուր, մակերեսային պատկերացում են կազմում: Այդ պատճառով էլ կարևոր է բնագրի՝ որոշակի հանձնարարականներով վերընթերցումը, որի ժամանակ երեխաները պետք է ինչ-որ նորություն գտնեն, բացահայտեն նոր փաստեր, որոնք առաջին ընթերցման ժամանակ չէին նկատել, հակառակ դեպքում վերընթերցումը կվերածվի մեխանիկական ու անհետաքրքիր աշխատանքի: Որպեսզի բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող դասն անարդյունավետ և ձանձրալի չլինի, կարևոր է իմանալ նրա բաղադրամասերից յուրաքանչյուրի առանձնահատկությունը: Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք այլ հատկանիշների դաստիարակում: Ընթերցանությունը պետք է ծառայի արժեքային համակարգի և մարդկային բարձր արժեքների ձևավորմանը: Կարելի է ընտրել այնպիսի բնագրեր, որոնցից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի ու ժողովրդի կյանքում, կձգտի սիրով, խնամքով և հոգածությամբ վերաբերվել գրքին, կիմանա գրադարանից օգտվելու կանոնները, խնամքով կվերաբերվի գրադարանի գրքերին, կարժևորի համախմբվածությունն ու միասնությունը, կկարևորի ուրիշին հարգելու հատկանիշը, կգնահատի արդարամտությունը, կմերժի բացասական հատկանիշները՝ անտարբերությունը, եսասիրությունն ու վերաբերմունք կդրսևորի դրանց նկատմամբ: Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ: Ընթերցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի, յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի

տեքստը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գրածը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ տեքստի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է: Երեխաների միտքը և երևակայությունը անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն հետաքրքրում են ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո, երեխան այն ներկայացնում է, կարդում, նկարում, պատրաստում իր հեքիաթի նկարազարդ էջը: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցեր տալիս հենց հեղինակին: Հեքիաթ հորինելը կարելի է կազմակերպել կշռադատման փուլում, երբ երեխաները ամփոփում են իրենց ընթերցած պատմությունը կամ հեքիաթը և վեր են հանում գլխավոր միտքը:/2/

Մայրենիի ուսուցման մեթոդիկայում ներկայացված են այն մանկավարժական հիմնական պայմանները, որոնք անհրաժեշտ է ապահովել սովորողի խոսքային գործունեության ժամանակ: Դրանք հետևյալներն են.

1. **Խոսելու և խոսակցին ունկնդրելու ցանկություն**. այսինքն՝ խոսելու պահանջմունք: (Մարդը խոսում է, երբ խոսելու կարիք ունի. երբ աշակերտը խոսում է, պատմում, կարիք չկա նրան սաստել կամ ընդհատել):
2. **Խոսելու նյութի առկայություն**.

Խոսքը կառուցելուց առաջ պետք է սովորողն ունենա տեղեկություններ նյութի մասին: (Նկատի ունենալ, թե որքանով է հետաքրքիր և ուշագրավ նյութը, իսկ փաստերը՝ արժեքավոր և հիմնավոր):

3. **Խոսքի ընդունված կանոններով սովորողներին զինելը**. Երեխաներին տալ խոսքի օրինակելի նմուշներ: Խոսքի օրինակելի նմուշները երեխաները ստանում են ընտանիքում, դպրոցում, գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք

նրանք կարդում են, ունկնդրում:

4. **Հասկանալ այն ամենը, ինչի մասին խոսվում է, ընկալել խոսքի տրամաբանությունը**:

Առանց խոսելու նյութը հասկանալու՝ հնարավոր չէ բովանդակային խոսք կառուցել:

5. **Տարբերել գործող անձերի տրամադրությունը և այն ներկայացնել ինչպես ձայնային, այնպես էլ լեզվական արտահայտչամիջոցներով:**
6. **Ապահովել կապը ունկնդրի հետ:**.

Խոսելիս հետևել, արդյո՞ք մարդիկ լսում են, հասկանում, հետաքրքի՞ր է, չե՞ն ձանձրանում: (Սա նշանակում է՝ ընտրել համապատասխան բառապաշար, խոսել պարզ լեզվով):

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում ես ձգտում եմ ոչ միայն մշտապես ապահովել այս մանկավարժական պայմանները, այլև հետամուտ լինել սովորողների կողմից դրանցից յուրաքանչյուրի իմացությանն ու կիրառմանը:

Իմ տարիների փորձով համոզվել եմ, որ սովորողների բանավոր խոսքն արտացոլում է նրանց ներաշխարհը, մտքերը, անհանգստությունները, հոգեբանությունը: Սա ես համարում եմ չափազանց կարևոր և մայրենիի դասերի ընթացքում փորձում եմ ստեղծել այնպիսի մանկավարժական պայմաններ, այնպիսի հուզական մթնոլորտ, որոնք կնպաստեն ազատ, անկաշկանդ հարաբերությունների, խոսելու, պատմելու, արտահայտվելու սովորողների պահանջմունքների դրսևորմանը:

Կրտսեր դպրոցականների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքները մենք մշտապես իրականացնում ենք նկարների դիտարկման, այլ օբյեկտների ցուցադրման, զրույցի, գեղարվեստական տեքստերի ընթերցանության, բեմադրությունների, երկխոսությունների, բանավեճերի, իրադրային խաղերի ճանապարհով՝ հաշվի առնելով բազմաթիվ և բազմաբնույթ գործոններ, հակառակ դեպքում իրականացրած յուրաքանչյուր խոսքային գործունեություն կարող է դառնալ աննպատակ:

Իմ աշխատանքային փորձով համոզվել եմ, որ կրտսեր դպրոցականի թե՛ բառապաշարի, թե՛ կապակցված խոսքի զարգացման գործընթացում առաջատար դեր ունի ընթերցանությունը: Ընթերցանությունը անձի մտածողության և մտավոր զարգացման աղբյուրներից է: Ինչպես նշել է նշանավոր մանկավարժ Սուխոմլինսկին՝

«Ընթերցանությունը մի շավիղ է, որը տանում է մտավոր, բարոյական, գեղագիտական զարգացման գագաթը»: Նրա կարծիքով՝ «Կարդում է միայն այն աշակերտը, որի գիտակցության մեջ բառը խաղում է, թրթռում, երփներանգվում շրջապատող աշխարհի գույներով ու մեղեդիներով»: Կրտսեր դպրոցականները հիմնականում կարողանում են ճիշտ կարդալ, բացատրել իրենց կարդացածի իմաստը: Սակայն բավարարվել այսքանով՝ սխալ է: Կարևոր է, որ գիրք կարդալը նրանց համար դառնա կարևոր անելիք, ձևավորվի աշխարհաճանաչմանը կարդալով հասնելու պահանջմունք: Սկսած առաջին դասարանից՝ մենք կարևորում ենք արտադասարանային ընթերցանությունը, վերլուծությունը, գաղափարների բացահայտումը ու ենթատեքստերի կռահումը, կարդացած ստեղծագործությունների բեմականացումը, գրողների կեսագրության արժեքավոր դրվագների քննարկումը, նրանց տուն-թանգարաններ այցելությունը և այլն: Այս ամենը մենք կազմակերպում ենք՝ նկատի ունենալով տարրական դասարաններում մայրենիի դասավանդման հիմնական խնդիրները. սեր և հետաքրքրություն առաջացնել գեղարվեստական գրականության նկատմամբ, ընդլայնել աշակերտների ճանաչողության սահմանները, դաստիարակել ապագա մարդ ու քաղաքացի, զարգացնել սովորողների տրամաբանական, քննադատական մտածողությունը, երեխաներին նպատակաուղղել խորհելու, ինքնուրույն դատողություններ անելու: Գաղտնիք չէ, որ սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում են մայրենիի դասերի բոլոր փուլերում. և՛ նոր նյութ հաղորդելիս՝ ակտիվ զրույցների միջոցով, և՛ ընթերցելիս ու պատմելիս, և՛ բառային աշխատանքներ կատարելիս ու բնագրերի շուրջ աշխատելիս: Մենք վստահ ենք, որ այս հարցում կարևոր են հատկապես ինքնուրույն ընթերցանության դասերը, որոնց մեթոդապես ճիշտ կառուցումը սովորողների մեջ սեր և հետաքրքրություն է արթնացնում դեպի ընթերցանությունը, գիրքը:

Սկսած 2-րդ դասարանից՝ աշխատում եմ ընթերցանության դասերն այնպես կազմակերպել, որ աշակերտները սովորեն հասկանալով կարդալ, որ ընթերցանությունը հաճույք պատճառի նրանց, լինի հետաքրքիր, ուսուցանող, նրանց փոխանցի

բարձրարժեք տեղեկություններ: Սկզբնական շրջանում երեխաների համար ընտրում եմ այնպիսի հեքիաթներ, որոնք նրանք կկարողանան կարդալ՝ առանց հոգնելու և ձանձրանալու: Աստիճանաբար աշակերտները ձեռք են բերում սահուն կարդալու տեխնիկա, հարուստ բառապաշար, նկատում են իրենց ձեռքբերումները:

Մայրենիի դասերին ես կիրառում եմ խոսքի զարգացմանը նպաստող բազմաթիվ հնարներ, սակայն առավել արդյունավետ է կարդացած բնագրի շուրջ իրականացվող խոսքային գործունեությունը, որը մեծ հետաքրքրություն և ոգևորվածություն է առաջացնում աշակերտների շրջանում: Սովորաբար ընտրում եմ այնպիսի ստեղծագործություններ, որոնք համապատասխանում են նրանց տարիքին և զարգացնում են երևակայությունը : Մենք դասվարներս չափազանց արդյունավետ ենք համարում հատկապես ԽԻԿ համակարգով իրականացվող մայրենիի դասերի իմաստավորման փուլում իրականացվող խոսքի զարգացմանը միտված աշխատանքները:

Մայրենիի դասերի ժամանակ նախատեսված բնագրի շուրջ իրականացվող աշխատանքի տարբեր փուլերում իրականացնում ենք հետևյալ բնույթի առաջադրանքներ. կարդացած ստեղծագործության նոր վերնագրի առաջադրում, հենակետային բառերի, կապակցությունների օգնությամբ նոր բովանդակությամբ տեքստի հորինում, տրված ստեղծագործության հիմնական մտքի բացահայտում, ենթատեքստերի կռահում, ստեղծագործության բաժանում առանձին պարբերությունների, յուրաքանչյուրի վերնագրում և ընդարձակում՝ հյուսելով նոր պատմություն, որևէ խնդրի շուրջ երկխոսության ստեղծում բնագրի կերպարների միջև, պատմությունը ներկայացնել որպես մասնակից, որպես ականատես, պատմել առաջին, երկրորդ, ապա երրորդ դեմքով և այլն:

Որպեսզի այս աշխատանքներն իրոք նպաստեն կապակցված խոսքի զարգացմանը (և ոչ թե առանձին մտքերի ձևավորմանը), աշակերտներին մղում եմ ընդարձակ, ավարտուն միտք կառուցելու, հյուսած մտքերում խոսքի տարբեր տեսակները կիրառելու, դրանք վերլուծելու և այլն: Նման գործունեության ընթացքում (թե՛ մենախոսության, թե՛ երկխոսության ժամանակ) աշակերտի խոսքը չենք ընդհատում, ինչպես նաև թույլ տված սխալները չենք ուղղում, հակառակ դեպքում՝ աշակերտները կսկսեն կաշկանդվել և չխոսել: Թույլ տված սխալները համակարգում ենք և դրանց

շտկման ուղղությամբ հետագայում աշխատում: Նման աշխատանքի արդյունքում դասարանում ստեղծվում է դրական մթնոլորտ, վստահություն և խոսելու կարիք,

ձևավորվում է նաև հարգանք միմյանց նկատմամբ, լսելու ցանկություն և կարողություն: Արդյունքում հարստանում է սովորողների բառապաշարը, սովորում են նորածանոթ բառեր, որոնք գործածում են իրենց խոսքում, կարողանում են համարձակ արտահայտվել, լինել ուշադիր ունկնդիր, հարցեր տալ, արտահայտել սեփական միտքը:

Կարդալու հիմնական ձևերն են՝ բարձրաձայն և լուռ կարդալը, որոնցից թե՛ մեկը, և թե՛ մյուսը մարդու կյանքում իրենց հատուկ տեղն ունեն:

Բաձրաձայն կարդալու առանձնահատկությունն այն է, որ կարդացողը ոչ միայն իր, այլև ուրիշների համար է կարդում, ուստի նա պետք է կարդա այնպես, որ լսողը կարողանա հասկանալ կարդացածի բովանդակությունը, որ լսածը նրա մեջ հույզեր և ապրումներ առաջացնի: Այս առումով բարձրաձայն կարդացողը փաստորեն կարդում է ուրիշների համար, այնինչ լուռ կարդացողը կարդում է միայն իր համար, հետևաբար ուրիշների համար կատարված այդ ընթերցումը պետք է հնարավորինս արտահայտիչ ու լսողների համար հասանելի լինի, որպեսզի հեղինակի խոհերն ու զգացմունքները փոխանցի նրանց:Այս հանգամանքը մեծապես դժվարացնում է բարձրաձայն ընթերցողի խնդիրը, որովհետև նա ոչ միայն պետք է հետևի կարդացածի մտքին՝ այն ճիշտ հասկանալու համար, այլև միաժամանակ պետք է աշխատի գտնել տվյալ միտքը արտահայտելու ու լսողներին փոխանցելու պատշաճ եղանակը, տոնն ու ձայնային հնչերանգի ձևերը: Իսկ դա նշանակում է, որ բարձրաձայն կարդացողը բնագիրը պետք է վերլուծի ոչ միայն ըստ բովանդակության, այլև՝ ըստ ձևի, որովհետև արտահայտիչ կարդալու հիմնական նախապայմանը բնագրի վերլուծությունն է ըստ ձևի, սակայն այս դեպքում այն հանդես է գալիս որպես հեղինակի լեզվի առանձնահատկությունների ու արտահայտման ձևերի ընկալման միջոց:

Ընթերցանությունը տարրական դպրոցում

Դասարանային աշխատանքները կապված են մայրենիի առարկայական բովանդակության և նպատակների հետ: Դրանք ընդգրկված են առարկայական տարեկան թեմատիկ պլանավորման մեջ և առաջարկվող ժամանակացույցով իրականացվում են դասերի ընթացքում:

Արտադասարանային աշխատանքները կազմակերպվում են դասարանային աշխատանքներին զուգահեռ :Դրանք կազմակերպվում և իրականացվում են մայրենիի դասավանդման ընթացքում՝ ուսուցչի կողմից, և վերահսկվում են մասնախմբի նախագահի և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից:

Մեր դպրոցում կատարում ենք հետևյալ դասարանային աշխատանքները.

- Կարդացած գրքի էջերի ամենօրյա նշման գրքույկի ստեղծում և ընթերցանության մշտադիտարկում: Գրքույկում նշվել են սովորողների անունները, կարդացվող գրքերի վերնագրերը, դրանց էջերի քանակը, ավարտելու ժամկետի մասին նշումներ:
- Կարդացած գրքից ծաղկաքաղի ներկայացում: Աշակերտները ներկայացրել են իրենց ընթերցած գրքից դուր եկած հատվածների կամ մտքերի ծաղկաքաղը և քննարկել ընկերների հետ:
- Կիսամյակի ընթացքում կարդացած գրքի ներկայացում՝ նկարազարդումների միջոցով: Այս աշխատանքին մասնակցել են այն աշակերտները, որոնք նկարելու ձիրք ունեն և կարողացել են նկարել իրենց տպավորությունները կարդացածի վերաբերյալ:
- Նկարազարդ գրքույկների շնորհանդեսի և ցուցահանդեսի կազմակերպում: Այս աշխատանքը նախատեսվում է կատարել տարեվերջին: Աշակերտները կցուցադրեն իրենց իսկ կազմած գրքերը՝ որևէ հեքիաթի կամ իրենց հորինած հեքիաթի շուրջ:
- Կարդացած գրքի օր: Սահմանված ժամանակահատվածում սովորողները հանդես են եկել համառոտ հաշվետվություններով՝ իրենց կարդացած գրքի մասին:
- Ընթերցանության տեխնիկայի ստուգում՝ յուրաքանչյուր երկրորդ ամսվա վերջում: Յուրաքանչյուր երկրորդ ամսվա վերջում ստուգվել է ընթերցանության տեխնիկան՝ սովորողին հետադարձ կապ տալով ձևավորող գնահատմամբ: Սովորողներին տրվել են տեքստեր և հաշվվել է նրանց կարդացած բառերի քանակը մեկ րոպեում: Այնուհետև տրվել են հարցեր՝ պարզելու, թե որքանո՞վ են հասկացել կարդացած տեքստի իմաստը, արվել են նշումներ արտահայտիչ, սահուն, ճշգրիտ կարդալու վերաբերյալ:

Արտադասարանային աշխատանքների շրջանակում անցկացրել ենք՝

Ընթերցանության մրցույթ՝«Լավագույն ընթերցող»:
Այս մրցույթն անցկացվեց երկրորդ և երրորդ դասարանների աշակերտների միջև: Ստուգվեց սովորողների կարդալու արագությունը մեկ րոպեում :

Ընթերցանության խրախուսիչ մեթոդներից մեկն էլ քննարկումներն են :Այդ պատճառով տարրական մասնախմբի դասարանները իրենց ինքնուրույն ընթերցանության որոշ ժամերը անցկացնում են դպրոցի գրադարանում: Գրադարանավարը կազմակերպում է քննարկումներ ընթերցած գրքերի շուրջ: Գրադարանում կազմակերպում է նաև բարձրաձայն ընթերցանության ժամեր: Սովորողները ընտրում են նյութը, որը պետք է կարդան, բարձրաձայն կարդում են, որից հետո մեկնաբանում և քննարկում են : Բարձրաձայն կարդալը զարգացնում է խոսքը, սահուն և արտահայտիչ ընթերցելու կարողությունը: Ձևավորում է լսելու, կենտրոնանալու, մտածելու, սեփական մտքերն ազատ արտահայտելու կարողություն:

Ընթերցանության խթանման նպատակով ,ծնողական ժողովներին տրվել են ցուցումներ՝ աջակցություն, թե ինչպես երեխաների մոտ սերմանել հետաքրքրություն ընթերցանության հանդեպ:

1. Ընթերցանության համար ժամանակ տրամադրել ամեն օր: Օգտվել գրադարանից:
2. Կարդալ դանդաղ և հաճույքով:
3. Կրկին ու կրկին կարդալ /երեխաները սիրում են լսել նույն պատմությունը/:
4. Կարդալ միշտ և ամենուր:
5. Երեխային չստիպել կարդալ:
6. Հետաքրքրվել երեխայի ընթերցանությամբ:
7. Մտածել ընթերցանությունը խրախուսելու միջոցներ:
8. Ծնողները իրենց օրինակով ընթերցանության հանդեպ հետաքրքրություն սերմանեն :

Իմ փորձից

Կատարել եմ հետևյալ դիտարկումը երկրորդ դասարանում՝ հասկանալու, թե այսչափ աշխատանքներ կատարելու արդյունքում ի՞նչ վերջնարդյունքներ ունենք: Ծնողներին տրվել եմ հարցաթերթիկներ, քննարկվել ենք հետևյալ հարցերը.

Հարց 1. Արդյո՞ք երեխաները ինքնակամ ընթերցում են որևէ ստեղծագործություն:

Երկու ծնողներն էլ պատասխանել են, որ երեխաները ինքնակամ, լրացուցիչ ոչինչ չեն ընթերցում: Ստիպողաբար ընթերցում է մեկ սովորող:

Հարց 2. Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ են ընթերցում սովորողները:

Ծնողները պատասխանել են, որ սովորողները նախընտրում են ընթերցել կարճ, նկարներով հագեցած հեքիաթներ:

Վերլուծություն

Ըստ հետազոտության արդյունքների՝ 2-րդ դասարանում գրանցվել է աշակերտների ընթերցանության որակի բարձրացմանը խթանող հետևյալ արդյունքները:



Եզրակացություն

Ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որն անհրաժեշտ է զարգացնել սկսած տարրական դպրոցից:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը և ընթերցողական կարողությունների ձևավորումը բարդ գործընթաց է, որովհետև այն պայմանավորված է ոչ միայն մանկավարժական գործընթացով, այլ աշակերտների անձնային հակումներով:

Ընթերցողական կարողությունների ձևավորման աշխատանքները անհրաժեշտ է հանգամանորեն պլանավորել այնպես, որ իրագործվեն հետևողականորեն, ունենան աստիճանական ձևով զարգացող բնույթ և փոխլրացնեն միմյանց: Ընթերցանությանը մասնակցում են ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլ շատ զգայարաններ: Մեր գերխնդիրն է ընթերցանության տեսակների կիրառմամբ կազմակերպել կարդալու ուսուցում տարրական դասարաններում, առաջացնել սեր և հետաքրքրություն գրքի և ընթերցանության հանդեպ: Նպատակն է այնպիսի ընթերցողի ձևավորում, որը կարդալու ընթացքում ձեռք կբերի տեղեկատվություն և այն կիմաստավորի: Կրտսեր դպրոցականների համար գեղարվեստական ստեղծագործությունները այն պատուհանն են, որտեղից նրանք տեսնում են աշխարհը, ճանաչում ու սիրում են իրենց շրջապատող բնությունը, մարդկանց, ձևավորվում ու զարգանում է նրանց գեղարվեստական ճաշակը: Ընթերցանության խրախուսման համար կարևոր է կարդացող մարդու՝ որպես հաջողակ, ժամանակակից, ակտիվ, իր միջավայրում փոփոխություններ իրականացնող անհատի կերպարի ձևավորումը: Այս ամենին հասնելու համար առաջարկում եմ՝ մշտապես կիրառել վերը նշված մեթոդներն ու հնարները, շարունակել այն բոլոր աշխատանքները, որոնք կատարվում են դպրոցում և արդեն իսկ իրենց պտուղներն են տալիս: Գիրքն ու գրականությունը դարձել են մեր աշակերտների անբաժան ուղեկիցը, ընկերն ու բարեկամը, բարելավվել է նրանց ընթերցանության որակը, և որ ամենակարևորն է, նրանց մեծամասնությունը դա անում է մեծագույն սիրով և ինքնակամ:

Օգտագործված գրականության ցանկ՝

1 .Բալայան Ա., «Մայրենի լեզվի դասերին կիրառվող մեթոդների ընտրության հարցի շուրջ», Նախաշավիղ, 2007:

2. Գալստյան Ա., Խարազյան Ռ., Ավագյան Լ., Բալայան Ա., «Ինքնուրույն ընթերցանության նյութեր» 2, Եր., Էդիթ Պրինտ, 2009:

3. Կարինե Թորոսյան, «Ընթերցանության դասերի կատարելագործման ժամանակակից պահանջներ» Նախաշավիղ 1. 2001:
4. Գյուլամիրյան Ջ. Հ., «Մայրենիի ուսուցման մեթոդիկա», Զանգակ, Երևան, 2018, 340 էջ

:

5. Խարազյան Ռ.Փ., «Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում», Աստղիկ, Երևան, 2003, 128 էջ:
6. Սուխոմլինսկի Վ.Ա. , «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան, «Լույս», 1977, 317 էջ:

7. Տեր-Գրիգորյան Ա. Ե., «Հայոց լեզվի մեթոդիկա»,«Լույս» Երևան,1980,562 էջ:
8. Արնաուդյան Ա., Մանուկյան Մ. «Մեթոդական ձեռնարկ» Էդիթ Պրինտ, 2023:

Դասի պլան 1

Դասի թեման՝ Ծիածան

Դասի նպատակը՝ զարգացնել տեքստն անգիր վերարտադրելու կարողություն,

մտքերն անկաշկանդ արտահայտելու կարողություն,

Դասի խնդիրները՝ բովանդակության հիմնական միտքը կվերհանեն առաջադրված հարցերի միջոցով

- ✓ անգիր վերարտադրեն բանաստեղծությունը,
- ✓ պատասխանեն բնագրին կից հարցերին
- ✓ կատարեն լեզվական առաջադրանքներ:

Դասի ընթացքում զարգացող վերջնարդյունքներ՝

- իմանա ծիածանի մասին՝ որպես բնության երևույթիիմանա
- այբուբենը հնչյունի և տառի մասին
- կիրառի բարեվարքության կանոններ
- օգտագործի առօրյայում բարեկիրթ բառապաշար՝ ըստ անհրաժեշտության :

Կարողունակությունը՝

- ❖ լեզվական գրագիտություն
- ❖ թվային և մեդիա
- ❖ սովորել սովորելու

Կապը ՀՊՉ-ի հետ՝ S1, S7, S15,S24, S25:

Խաչվող հասկացություն՝ Կառուցվածք և գործառույթ, պատճառ և հետևանք, կայունություն և փոփոխություն:

Միջառարկայական կապ՝ Կերպարվեստ, Ես և շրջակա աշխարհը, Երաժշտություն

Դասի ընթացքը

Սկիզբը՝ 5ր

Աշխատանքների կազմակերպում, անելիքների նախանշում, վերջնարդյունքների սահմանում:

Աշխատանք բնագրի շուրջ 15ր

Բանաստեղծություն լուռ ընթերցում, ըմբռնում և վերարտադրում: Լեզվական նյութի ճանաչում տեքստում:

Պաստառի ձևավորում (Առաջադրանք 14, էջ 7):

Գրավոր կարողությունների զարգացում՝ Գրավոր առաջադրանքների կատարում:

Ամփոփում՝ Հարց ու պատասխան մեթոդով:

Գնահատում՝ Ձևավորող գնահատում, ինքնագնահատման սանդղակ:

Դասի պլան 2

Դասի թեման՝ Շաբաթվա իմ յոթ օրերը

Դասի նպատակը՝

- ✓ զարգացնել ընթերցողական կարողությունը
- ✓ ընթերցել տեքստը ճիշտ ,վարժ և հասկանալով
- ✓ վերարտադրել տեքստի բովանդակությունը
- ✓ ձևավորել ստեղծագործական կարողություններ:

Դասի խնդիրները՝

- ✓ բնագիրը լուռ կընթերցեն
- ✓ բովանդակության հիմնական միտքը կվերհանեն առաջադրված հարցերի միջոցով
- ✓ գրավոր աշխատանք կկատարեն ձայնավորների և բաղաձայների շուրջ

Դասի ընթացքում զարգացող վերջնարդյունքներ՝

• հասկանալով և պահանջվող արագությամբ ընթերցի արձակ տեքստը, բացատրի որոշ բառերի իմաստը համատեքստում

• լսի հրահանգեր, իրեն ուղղված խոսքը և արձագանքի,

• ձևակերպի հարցեր լսածի, տեսածի, զգացածի, ընթերցածի, իրեն հետաքրքրող հարցերի մասին

• իմանա շաբաթվա օրերը,

• պլանավորի սեփական քայլերը,

• կազմի օրվա կանոնակարգը,

• վերլուծի իր գործողությունների հետևանքները,

•զգա և գնահատի ժամանակը:

Կարողունակությունը՝ լեզվական գրագիտություն

Կապը ՀՊՉ-ի հետ՝ S1, S7, S8,S9, S24:

Խաչվող հասկացություն՝ Օրինաչափություն, պատճառ և հետևանք, ժամանակ և տարածություն:

Դասի ընթացքը

Սկիզբը՝ 5 ր

Աշխատանքների կազմակերպում, անելիքների նախանշում, վերջնարդյունքների սահմանում:

Աշխատանք բնագրի շուրջ 15ր

Բնագրի լուռ ընթերցում, ըմբռնման հարցերին պատասխանում և մեկնաբանում: Լեզվական նյութի ճանաչում տեքստում:

Գրավոր կարողությունների զարգացում՝ Գրավոր առաջադրանքների կատարում:

Ամփոփում՝ Հարց ու պատասխան մեթոդով:

Գնահատում՝ Ձևավորող գնահատում, ինքնագնահատման սանդղակ: